Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ Հ. Արշակյանի գործուղման արդյունքների մասին

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

  Հակոբ Արշակյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ**

  ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

  Բելառուսի Հանրապետություն (ք. Մինսկ), 2018 թվականի հունիսի 20–21-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄ**

  Բելառուսի Հանրապետության կապի և տեղեկատվայնացման նախարարություն

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿ**

  Մասնակցություն Արևելյան Գործընկերության երկրների թվային տնտեսության/տեխնոլոգիաների նախարարական ոչ պաշտոնական հանդիպմանը

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

  Արևելյան Գործընկերության (ԱլԳ) երկրների թվային տնտեսության/տեխնոլոգիաների նախարարական ոչ պաշտոնական հանդիպման կենտրոնացումը թվային շուկայի ներդաշնակեցումն էր՝ ներառյալ լայնաշերտ կապի զարգացումը, ռոումինգի սակագների մոտարկումը, կիբեռանվտանգության և ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող այլ նախագծերը, ինչպես նաև վերջինիս ազդեցությունը տնտեսության կայուն զարգացման վրա:

  Նախարարական ոչ պաշտոնական հանդիպման աշխատանքը հիմնականում ծավալվեց մի քանի հիմնական հարցերի շուրջ, որոնց թվում էին ԱլԳ տարածաշրջանում լայնաշերտ կապի զարգացման քաջալերումը և ԱլԳ երկրների միջև ռոումինգի սակագների մոտարկումը:

ԱլԳ տարածաշրջանում լայնաշերտ կապի զարգացման քաջալերման հարցի քննակման ընթացքում անդրադարձ եղավ ԵՄ-ի աջակցմանը բոլոր ԱլԳ երկրների կողմից ազգային լայնաշերտ կապի ռազմավարության մշակմանն ու թարմացմանը՝ տրամադրելով տեխնիկական և կարողությունների հզորացման աջակցություն Համաշխարհային Բանկի և Արտաքին ներդրումային ծրագրի միջոցով, որում ներառված են թվային ներդրումները և ուղղված են քաջալերելու մասնավոր հատվածին ներդնելու թվային ենթակառուցվածքներում:

Քննարկվեցին նաև լայնաշերտ կապի զարգացման առավելությունները, ինչպես նաև հանրային հատվածի դերը մասնավոր հատվածի ներդրումների խթանման հարցում այնպիսի միջոցներով, ինչպիսիք են հանրային կազմակերպությունների համար կապակցվածության ծառայությունների փաթեթային գնումները:

ԱլԳ երկրների միջև ռոումինգի սակագների մոտարկման հարցի շրջանակներում քննարկվեց Տարածաշրջանային ռոումինգի համաձայնագրի (RRA-ի) կիրառության նպատակահարմարությունը ԱլԳ տարածաշրջանում նոր ռոումինգի սակագների ներդրման համար:

Նախարարական ոչ պաշտոնական հանդիպման ընթացքում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ Հակոբ Արշակյանը մի շարք երկկողմ հանդիպումներ է ունեցել բարձրաստիճան պաշտոնյաների հետ, որոնց թվում էին Բելառուսի կապի և տեղեկատվայնացման նախարար, աշխատանքային խմբի ղեկավար Սերգեյ Պոպկովը, Գործընկերության երկրների պատվիրակությունների ղեկավարները, ինչպես նաև ԵՄ-ի հանձնակատարներ Յոհաննես Հաննը և Մարիա Գեբրիելը, ում հետ հանդիպման ընթացքում քննարկվել են բլոքչեյն տեխնոլոգիաների կիրառման ոլորտների, արհեստական բանականության, ստարտափերի աջակցությանը և կադրերի պատրաստմանը վերաբերող խնդիրները: Թվային տնտեսության և հանրության հարցերով ԵՄ-ի հանձնակատար Մարիա Գեբրիելի հետ ձեռք է բերվել նախնական պայմանավորվածություն նոյեմբերի 15-ին Սոֆիայում կայանալիք «Startup Summit»-ում ներկայացվածության շուրջ, որին կմասնակցեն նաև հայկական ստարտափեր:

Նախարարի առաջին տեղակալը հանդիպել է նաև «Ինտեգրալ» ընկերության գլխավոր տնօրեն Վիտալի Սոլոդուխայի հետ: Բելառուսական ընկերությունը զբաղվում է միկրոէլեկտրոնիկայի նախագծմամբ և արտադրությամբ: «Ինտեգրալ»-ը տրանզիստորների

թեստավորման համար օգտագործում է հայկական «Անի տեստ» ընկերության արտադրած ավտոմատ թեստավորման համակարգերը: Հանդիպման արդյունքում ընկերության ղեկավարը Ա. Հակոբյանի կողմից հրավիրվել է Հայաստան՝ երկկողմ համագործակցության հնարավորությունները քննարկելու կիսահաղորդչային սարքերի նախագծման և թեստավորման ոլորտում:

Քաղաք Մինսկ պաշտոնական այցի շրջանակներում Հակոբ Արշակյանը եղել է բելառուսական «Բիքլաուդ» կենտրոնացված տվյալների մշակման կենտրոնում, որտեղ հանդիպել է նաև «Սոֆթլայն» ընկերության ներկայացուցիչների հետ: Քննարկվել են Հայաստանում Տվյալների կենտրոնի («Data center») ստեղծման նախագծին առնչվող հարցեր:

- **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ՝

Հակոբ Արշակյան
24.07.2018թ.